*ըստ Օրինօք տանն հայոց ըստ նմանութիւն իւրաքանչիւր Օրինակաց։*

Փոխառութիւն եկամտից եւ տարեկան ծախից տանն հայոց։

## ԳԼՈՒԽ ԾԺԹ.

*Զամենայն զոր ինչ պտուղ 'ի բուսոց, տընկոց և 'ի սողնոց, թռչնոց և անասնոց, կերակրոց որ կերակրէ և յագեցուցանէ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին հայոց, համարեսցուք կերակրեալք անձինք արու և էգ 'ի ծերոց մինչև 'ի մանկունս, միմիայն անձինք եթէ գտցի 24 միլիոն, որում պատասխանէ 2400 բիւր անձինք, կերակուրս սոցայ թէ յաճախ և հարըստութեամբ և թէ նուազ և աղքատութեամբ՝ մի 'ի վերայ միւսոյն ըստ իւրաքանչ անձանց տարեկան կերակրոց գին համարեցաք ամենայն մի անձին կերակուրս 'ի միոյ ամաց 40 դահեկան երծաթ, որ 'ի 24 միլիոն անձանց կերակուրք արժէ և բովանդակի 960 միլիոն դահեկան երծաթի, որում համապատասխանէ 960,000,000 լաք դահեկան երծաթ, սոցայ ամենայն ազգ կերակրոց տասանորդս մտանելոց է 'ի գանձարանս հայոց, որում բովանդակի տարեկան եկամուտ.*

*Եկամուտ կերակրոց միայն դահեկան երծաթ . . . 960,000,000*